


բարեխղճութեամբ կառավարուէր այսօր տարեկան յիսուն հազարի փոխարէն գուցէ հինգ հարիւր հազար ուսփի եկամուտ ունենար, Միայն այս մէկ պարագայն յիշենք, որ քսան տարւոյ չափ մէկ անհատ միայն անսահման իրաւասութիւն ունէր եկեղեցւոյ ընչից, կալուածոց, եկամտից վրայ և ներքին ու րովանդակ մատակարարութիւնը նորա ձեռքումն և ամէն փոփոխութիւն ու կարգադրութիւն կարող էր ինքնիշխանաբար կատարել, իւր արարքի համար քսան տարուայ ընթացքում պատասխանատու էր եղել ոչ ումեք յայսմ աշխարհի, Բայց ինչպէս Մարդասիրական ճեմարանի մատակարարութիւնը, նոյնպէս Ս նազարեթայ եկեղեցւոյ այդ խանայական գրութիւն մի վերջակէտի յանգեց, և նոյն աղագասէր անձինք որ ճեմարանը կորուստից աղատեցին՝ եկեղեցւոյ կալուածներն ու եկամուտը ևս ապահովագոյն գրութեան մէջ գրին, Այդ միահեծան կառավարչի դէմ դատ բացան և նոր կարգադրութիւն հաստատեցին եկեղեցւոյ հոգարարձութեան համար և այդ կարգադրութիւն կառավարութեան կողմէ վաւերութիւն ստացաւ, եկեղեցւոյ բոլոր կալուածներն յանձնուեցաւ վերոյիշեալ Հանրային Հոգարարձութեան (Official Trustee), Եկեղեցւոյ հոգարարձութիւն ճեմարանի հոգարարձութեան պէս տասն և մին անդամներից բաղկացեալ Յանձնաժողով ունի և երեք երէցփոխք, զըլխաւոր որոշումներ Յանձնաժողովն կանէ, իսկ երէցփոխք որոշ արտօնութեանց համեմատ նուազ կարևոր խնդիրներում անկախօրէն կարող են տնօրինել, Յաւալի է ստելն որպէս և լսելն որ եկեղեցւոյ հոգարարձութեան (նման ճեմարանի) բոլոր ժողովներն, արձանագրութիւններն, հաշիւներն, տեղեկագրեր և յն. անդղիական լեզուաւ կը լինին, Միայն մի հայ քարտուղար ևս պահուում է որ հաշիւներն ձեւի համար հայերէն ևս թարգմանեն,

աղքատութեան հանգամանք չունեցող դատարկաշըրջիկ անձանց, որոնք անաշխատ հաց ուտելն և աղքատի անուն կրիլն նախամեծար են համարում քան բրտամբ երեսաց պատուով աշխատել և պարծանօք ուտել,

ԹՈՐՈՍ ԶԱՆ. Տ. ՆՍԱՆԱԿԱՆ ԶՈՒՂԱԹԵՅԻ



Գ Է Բ Ս Ի Մ •

(Շարունակութիւն)

Չ Ա Բ Ս Ա Ն Ճ Ա Գ

Չարսանճագ Գերսիմի հարաւային կողմերու ստորին մի մասն է բռնած. Չմշկածակ, Խողաթ, Քերդակ, Մեզկերտ, Փերին և Քղի դաւառներն, որք կը գտնուին Արածանւոյ աջ ափին վերայ, և որոց մէջ կան բաւական մեծ թուով հայեր և այդ տեղերն կը նստի մի մի գայմագամ, Խողաթ որ մի գիւղ էր 77-ի պատերազմէն յետոյ նահանգական քաղաք դարձաւ, ուր կը նստէր Վալին, սակայն վերջերս փոխուած է իւր նախկին ձևին, Ե՛մ նպատակն է ամենէ առաջ մասնաւոր ակնարկ ձգել մեր Մինաս բարբրի գաւառին, Փերինայ վերայ, Փերինայ վիճակն ունի մօտ 55 հայ և 10-ի չափ քուրտ գիւղեր, որք Մուզուր և Փերին ջրերու մէջ տարածուած են, քանի գիւղօրայք ևս ջրերու աջ և ձախ ափերուն վերայ կան, Մեզկերտու վիճակն ևս այս երկու ջրերու միջավայրն կը ընկնի, սակայն Փերինայ վիճակէն բարձր է 5 փամու չափ, սորա մի մեծ մասն մտած է Տուժիկ լեռներու մէջ, ունի քիչ հայ գիւղօրայք որք են. Աղլըլիսէ, Հարտիւ, Փախ, Հաւլոր և այլն, Փերինայ գիւղօրայքն և մօտաւորապէս ժողովրդեան թիւը այստեղ կը նկարացնեմ

| | ՀԱՅ | ՏՈՒՆ, | ԹՈՒՐԷ | ՏՈՒՆ |
|--------------|-----|-------|-------|------|
| Փերին | 600 | < > | 100 | < > |
| Բաղնիք | 15 | < > | 4 | < > |
| Խուշին | 20 | < > | 3 | < > |
| Գուլաղսղ թիլ | 16 | < > | 3 | < > |
| Հայվալի | 15 | < > | — | < > |
| Քիւրեքէն | 20 | < > | — | < > |
| Ճանիք | 10 | < > | 20 | < > |
| Մաստան | 0 | < > | 60 | < > |
| Բաղին | 8 | < > | — | < > |
| Գարնձսր | 8 | < > | — | < > |
| Լամբք | 15 | < > | 3 | < > |
| Չորակ | 16 | < > | 10 | < > |

Եկեղեցւոյ այդ տարեկան եկամուտն գործ է ածուում նոյն եկեղեցւոյ պայծառութեան համար, քահանայից, պաշտօնէից և սպասաւորաց վարձատրելու (երեք քահանայ են պահում, երկու երեք եկեղեցւոյ պաշտօնեայ, որպէս դպիր կամ տիրացու, քարտուղար և շատ սպասաւորներ), Ինչպէս վերն յիշեցինք Մարդասիրական ճեմարանը տասներկու գիշերօթիկ աշակերտաց ծախսն—մերձ 3600 ուսփի—եկեղեցւոյ այդ գումարիցն է ստանում, նոյնպէս երբեմն ուրիշ գպրոցներում ևս եկեղեցւոյ հաշուովն աշակերտներ են ընդունուում, Բաւական մեծ գումար նուիրում է հայաղղի չքաւոր ճանապարհորդաց, Իսկ ամենից ստուար գումարն շտալուում է մի խումբ աղքատութեան անուն կրող, այլ

| | ՀԱՅ | ՏՈՒՆ | ԹՈՒՐԿ | ՏՈՒՆ |
|---------|-----|------|-------|------|
| Ղայաչին | 25 | < > | 5 | < > |
| Մրդեն | 4 | < > | — | < > |
| Ուրծ | 15 | < > | 10 | < > |
| Կորառիճ | 20 | < > | 10 | < > |
| Բատուն | 20 | < > | — | < > |

ՄՋՈՒՐԱՅ ՈՒ ՓԵՐՆԵԱՅ ՄԻՋԱՎԱՅՐՆ

| | | | | |
|-------------|----|-----|----|-----|
| Շոտան | 10 | < > | 15 | < > |
| Տանապուռուն | 15 | < > | — | < > |
| ԽօճաՕփանէս | — | < > | — | < > |
| Գամպահ | 15 | < > | 6 | < > |
| Դիլանօղլի | 4 | < > | — | < > |
| Լազուան | 15 | < > | 3 | < > |
| Մրդեն | 3 | < > | 8 | < > |
| Կօյտէփէ | 60 | < > | 29 | < > |
| Կորճան | 15 | < > | 3 | < > |
| Ղուղուլճուխ | 20 | < > | 1 | < > |
| Իսմայիլիք | 40 | < > | 8 | < > |

ՄՈՒՋՈՒՐԱՅ ԶԵՐՆ ԱԶԸ

| | | | | |
|------------------------|-----|-----|------|-----|
| Էսիբիւք | 4 | < > | 10 | < > |
| Թիւրուշմէք | 20 | > > | 10 | < > |
| Սորբան | 20 | < > | 10 | < > |
| Սվճող | 30 | < > | 10 | < > |
| Վերի Հաւսեկ | 18 | < > | 8 | < > |
| Վարարուղար | 8 | < > | 3 | < > |
| Վեարի Հաւսեկ | 15 | < > | 6 | < > |
| Խանեկ | 20 | < > | 5 | < > |
| Շամցիք | 10 | < > | 1 | < > |
| Կատոսան | 15 | < > | 15 | < > |
| Վասկերտ | 50 | < > | 10 | < > |
| Սմախ | 10 | < > | 3 | < > |
| Լուսադառիճ | 20 | < > | 4 | < > |
| Լալ Մրդեն | 7 | < > | 1 | < > |
| Վեարի Խաճար | 10 | < > | 1 | < > |
| Վերի Խաճար | 25 | < > | 1 | < > |
| Բալլըշեր | 15 | < > | 3 | < > |
| Մերճուձէք | 30 | < > | 5 | < > |
| Թանց | 15 | < > | 1 | < > |
| Նորգեղ | 15 | < > | 2 | < > |
| Ուռիկ | 16 | < > | 2 | < > |
| Մրդեն | 20 | > > | 7 | < > |
| Բաշաղակ | 100 | < > | 15 | < > |
| Խարեսիկ | 25 | < > | 10 | < > |
| Բերդակ (ս. Տի- կին) | 30 | < > | 1000 | < > |
| Թիլ | 25 | < > | — | < > |
| Երկան | 15 | < > | 2 | < > |
| Վերի Զմբեղ | 10 | < > | 5 | < > |
| Վարի | 15 | < > | 4 | < > |
| Ցազման | 20 | < > | 15 | < > |
| Վայնայ | 15 | < > | 5 | < > |

Չարսանճագի Հայ ժողովուրդն իւր ասն յատուկ հող չունի, կարգ մի Թուրք բէկէր կան, որք երկիրն իրենց սեփականած են, և Հայերն իր-րև ստրուկ կը գործածեն:

Այս բէկերն ի վաղուց անտի Պէրսիմի հա-րաւային ստորոտներն իւրեանց սեփականած են, եր-կու ցեղէ առաջացած են, այս օր 24 տուն են. իւ-րաքանչիւրն ունի սեփական զիւղերն, Կառավարու-թեան օգնութեամբ սորա ձեռք ձգած էին Բալու-այ, Քղիի Փերինայ և Մինչև 2մշկածագի հողերն, վերջի ուս—Թըքական պատերազմէն յետոյ Քղիի փոքր Հայ ժողովուրդն Կարնոյ դատարաններն եր-կար ղեգերելուց յետոյ ձեռք ձգեց իւր հողերն և տիրացաւ. սակայն բազմահայ Չար—սանճագի ժողո-վուրդն դեռ բէկերու բռնութեան ներքև կը տան-ջուին, Հայ ժողովրդեան տարհատարհակ վարուիչն սոփորական մի բան է, Հայեր կը սերմանեն, բերքի եօթերորդ մասն կառավարութեան. մնացորդի կէ-սըն ևս բէկին կտան, Եւրաքանչիւր բէկ կը նստի մի գիւղի մէջ և տէր է 2—3 գիւղերու, Մուղուբայ ջրի կողմի գիւղերու մէջ հաստատուած բէկերն—Մեր-ճիմիք, Բալլըշեր, Բաշաղակ, Խարեսիկ, Վասկերտ, Խանեկ, Քալուքար, Մրդեն, Վերի Հաւսեկ, Սվճող, Զրի ձախն—Կէօյ դէփէ, Տանապուռուն, Իսմայիլիք, Զերին, Կորճն, Փերին, Բաղնիք, Ղուղին, Խայա-չին, Չորակ, Ուրց, ճանիկ:

Այս բէկերն որչափ որ իրրև գերի Հայն կը վարեն, սակայն օտարի հարստահարութեան դէմ ևս կը պաշտպանեն, որոց պաշտպանութեան հա-մար շատ անգամ իրարու դէմ պատերազմ մղած են, Մինչև 1880 թուականը Հայն կարող էր ամէն տեսակ ղէնք ունենալ, բէկերն ևս կատիպէին զինու-իլ որ ի հարկին իրենց օգնեն, սակայն այս տեղի ժողովուրդն այս մասին շատ դանդաղ շարժեցաւ, Հազարէն մի մարդ հաղիւ կայ որ քաջութեամբ անուանի եղած է, այնպիսին բէկերու մօտ մեծ յարգանք կը վայելէ: Թուրք բէկերն իւրեանց հը-պատակ ցեղակիցներն չունին որպէս քրդեր, սո-քա երբ իրարու դէմ պատերազմ պիտի մղեն, կը հաւաքեն վարձուոր պատերազմողներ և իւրեանց ծառաներն:

Այս բէկերն գրել կարգալ չեն գիտեր, օր յա-ւուր յետագիմելու վերայ են, Չարսանճագի Հայ ժողովուրդն նայելով 2մշկածագի, Աինայ և Խար-բերգի Հայ ժողովրդեան, անուսուսմն և անկիրթ է, բայց բոլորովին նուիրուած լինելով երկրագործու-թեան պարզ և միամիտ են. հաւատարմաբար կը ծառայեն բէկերուն, բէկերու բաժնից մի բուռ ցո-րեան վերցնելն մեծ մեղք կը համարեն. հիւրասէր

են, օտարականներն գեւ շինդրած՝ կը հրաւիրեն, կը հիւրասիրեն, մինչգետ Ակնցին, Խարբերգցին և Խարբերգու դաշտի ժողովուրդն միայն իւր ծանօթին, ազգականին կամ ուստի որ շահ տեսաւ, նրան կը հիւրասիրէ:

Գուժան մտած չէ Զարսանձագ, մի զոյգ եզով վար ու ցանք կանեն, սակայն երկիրն բերրի, կլիման բարեխառն լինելուն ամէն տեսակ սերմ և պտղատու ծառներ կաճին, երկրագործութեան մէջ կինն իւր ամուսնուն անբաժան ընկերն է. նա չարաչար կաշխատի. ծննդական կինն երեք օրից յետոյ երախայն արտի եզըն տանելով կը քնացնէ: Ինքընցորեանի գարու և այլն հուճք կանէ. կամ րանբակի քաղհանք կանէ և կամ որթի արքատներ կը հաւաքէ: լուստանի քաղհանքն՝ հասած բամբակն հաւաքել նաև իւր գործն է: Ծարույն ամէն եղանակին նա գործ ունի. երկրագործական ամէն աշխատանքի կը մասնակցի, տան կանացի գործերն ևս անթերի կը կատարէ: քաղհանքից յետոյ խոտ կը հնձէ, ամբան հնձից յետոյ խաղող կը կթէ: այգիներու մէջ ուռի կեփէ: այգուց որ պրծան՝ տուն կը վերադառնան ընտանեօք, ձմեռն բանբակ կը մանեն և կտաւ կը գործեն:

Զարսանձագցու տան անտեսութիւն խիստ կարգին է, իւրաքանչիւր տուն ունի իւր մեծն, որոյ ձեռքն է գրամը, տնեցոց համար ինչ ծախք որ լինի, նորա կամքով պիտի լինի. ոչ որ իրաւունք չունի մի փարայ իւր կամքով ծախսելու: նոյնպէս տունն ունի տան տիկինն, որոյ ձեռքն է մառանի բանալին, նա գիտէ իւր կարգն և պատրաստելու կերակուրն: Այս երկրի մէջ իւրաքանչիւր ընտանիք բաղմամբիւ են, Խուզուլձուխցի մի ընտանիք կայ, 100 անձէ բաղկացեալ է: Պտղատու և անպտուղ ծառներու ամէն տեսակներն կը գտնուին այս երկրի մէջ, Իսմայիլցուայ լեռուն, Լլուճլուայ կիւնէշն (արեգի) կը գտնուին խնկենի, կարմիր ալուճ, պոռուխի, բոզ փալուտ (կաղնի), լոզ փալուտ, լեպ փալուտ. ձերմակ, կարմիր խարա փալուտ, հաւկուտի տոխուզ տօնի, ալաճա, որ կեղևն եօթ գոյն ունի, սորա մանր պտղից թանաք կը շինեն. չեղևնէ, որ փուրը (նոր տերև) աղ կը գնեն, քաղցր համ ունի, բեմկի ծառի տեսակն է, բանչի ծառ, խարա խալխալ սելլի ուսի մորմենի որ տեղ տեղ ծառի նման հաստ կը լինի. մուրտար, գէմուրձուք, մայլամի, որոյ փայտը կարծր է և վերան կեռաս կը պտտուաստեն. սորա հոտից օձն կը փախչի: Բեմկի ծառ, որոյ խիտից խնկի բուրմունք կգայ, գնտակի վերքն կառողջացնէ, կաղնի նման, դանակով կեղևն կը ձեղ-

քեն, կաթ կտայ դուրս ապա խէժ կը դառնայ կաթըն, կանաչ տերևներից թթու կը բռնեն, աղը կը գնեն, խնկի համ ունի. նշի ծառ. ֆնտի ծառ (ընտանի կաղնի), զուզուլձուխի (հոնի), յունապի, դժնիկ, դարանայ, շբբի (վայրենի տանձ), տանձի, խնձորենի, մարսենի, թարղի, որ տոսախի նման կարծր է, պոճեղի, փամթաթուկի, թթի, շլոր իւր տեսակներով, արտուճ, մարխ, իլղուն, սորխուն և այլն և այլն:

Քիմիայ օթի, որ ձմերուկի տերևներու նման է, բժիշկներ իրրև գեղ կը հաւաքեն. ոչխարն որ կուտէ, առամներն իրրև ոսկի կը փայլեն:

Ս. Հայկունի.

(Նը շարունակուի)



ԳՐԱՆԲԱՆՈՒԹՅՈՒՆ:

ԽՈՒՆԵՐ ԵՆ ԽՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Ռուսաց «Образование» ամսագիրը իւր ապրիլի համարում ռուս. այլ և այլ թերթերից քաղելով մէջ է քննում թուրք և իրողութիւններ, որոնցից երեւում է. նախ թէ ի՞նչ աստիճանի յետնեալ վիճակի մէջ է կրթութեան գաղափարը ռուս ժողովրդի մէջ. երկրորդ՝ որչափ անպատիւ է ծանր է ժողովրդական ուսուցչի վիճակը. վերջապէս երրորդ՝ այս վերջիններս մէջ ինչպիսի՞ իրենց կոչման աւարժան անասններ են լոյս ընկնում:

ԴՐՈՐԾՆԵՐ ԵՆ ԳՆՆԵՑՆԵՐ.

Մինչեւ 1895-ի յունուարի 1-ը Օրլով նահանգում եղել են 607 դպրոցներ 46,656 աշակերտ ու աշակերտուհիներով: Այս դպրոցների ծախսը եղել է 574,476 ռուբլի. ուրեմն ամէն մի աշակերտի ընկնում է 7, 9 ռուբլ. իսկ այդ նահանգի ամէն մի քնակիչ 0,48 ռուբլի:

Նոյն տարում յիշեալ նահանգի բոլոր գիմնասիների թիւը եղել է 2,037, եւ գործ է ծածուկ 15,514,826 վեղորոգելից խմելք 1,534,492 ռուբլի արժողութեամբ: Ուրեմն մի մարդու գալիս է 5 ռուբլի խմելքի ծախս, իսկ 48 կուպէկ ուսման. ուրիշ խօսքով այդ նահանգի ժողովուրդը 17 անգամ անելի ծախս է անում՝ դուրսընթանալ, քան կրթութեան համար: Այս վիճակագրութիւնը հարգողում է Սյուսու. Вѣстник. -ը:

ՏՅՈՒՐ ՊԵՏՄՈՒԹՅՈՒՆ.

Устрожен. գաւառում միւնում է Եփիմով ազգանունաբ մի ուսուցիչը: նա 22 տարի ծառայել է ժողովրդական դպրոցներում եւ իւր մասից յետոյ թողել է 7 կրկնայ կարօտ մի պատառ հացի: Որովհետեւ պետութիւնը այդ կարգի ուսուցիչներին թողակ չէ տալիս, ուրեմն մտում է, որ այդ խնդր որբեր սովից միանան: Էստի առողջ ես, աշխատիր խեղդիչ ու խոնավ խորհիւններում, կեանք ու առողջութիւն կորցրու, ստացիր մի վարձատրութիւն, որ մի հոգու անգամ քաւական չէ, որ փայտ մի ամբողջ ընտանիքի, եւ երբ մեռնեն՝ մի պատառ հաց անգամ մի թողնի: Որքան դառնութիւն ու վիշտ կայ այս տեսակ կեանքի մէջ